դժնդակ կոտորումն անմեղաց մինչև 'ի ժամանակս Մեծին Կոստանդիանոսի (313)։ Եւ ինքեանք բռնաւորքն, որ ընդդէմ Քրիստոսի ոգորէին, չարաչար մահուամբ ելին 'ի կենաց աստի։

Յետ այնորիկ Կոստանդիանոս դիմեաց առ Աստուածն Քրիստոնէից, զոր մեծարէր հայր իւր, զի ցուցցէ նմա զաջ իւր աղատիլ 'ի բռնութենէ Մաքսենտեայ։ Եւ տես յերկինս զնշան լուսեղէն Խաչին եւ գիր թէ՝ Այս՝ յաղթեա՝ կամ՝ յաղթեսցես։ Եւ 'ի գիշերին յայնմիկ երեւեցաւ նմա Քրիստոս նովին նշանաւ և հրաման ետ առնել զնմանութիւն նորա և տանիլ առաջի զօրուն։

Այսպէս եհար Կոստանդիանոս զհզօրագոյն գունդն Մաքսենտիոսի, և բաղումք 'ի թշնամեաց սատակեցան 'ի գետն Տիբերիս, ընդ որս և ինքն Մաքսենտիոս հանդերձ երիվարաւ։ Ապա ետուն հրովարտակ Կոստանդիանոս եւ Լիկինիոս ընդունիլ Քրիստոնէից միւսանգամ զիրաւունս իւրեանց եւ ազատութիւն պաշտել զԱստուած որպիսի օրինակաւ եւ կամիցին։ Մեծարու լինէր Կոստանդիանոս խաղաղասէր օրինօք, իսկ Լիկինիոս անառակութեամբ և նոր հալածանօք լինէր ատելի ամենեցուն։ Խափանեաց զպաշտամունս Քրիստոնէից, սպան եպիսկոպոսունս բազումս և ժողովրդականս, ընդ որս և զօրականս 40 'ի Սեբաստիա Հայոց։ և զի կատաղեալ էր ընդդէմ Հայոց վասն քրիստոնէութեան նոցա, կոտորեաց զբազումս 'ի զօրաց նոցին 'ի Կողմանս Նիկոմիդեայ։ Յետ սպանանելոյ զեպիսկոպոսն Ամասիոյ զՍ։ Վասիլիոս եւ ապստամբելոյ 'ի Կոստանդիանոսէ, ժողովեաց զօրս ընդդիմանալ պատերազմաւ, և ցրտացեալ 'ի սիրոյ Տրդատայ մերս Թագաւորին, որպէս արդարեւ 'ի թշնամւոյ։ քանզի գիտէր թէ ատելի է արդարոյն ամենայն ամբարիշտ։ Խոր։ Բ։ 85։ Պարտեցաւ Լիկինիոս և 'ի Բիւզանդիոն սպանաւ իբրև դաւաճան (313)։ Բարձան, անհետ եղեն ամենայն հալածիչք 'ի միջոյ։ ընկալաւ Եկեղեցի խաղաղութիւն եւ Կոստանդիանոս եհան ընդ իւր յաթոռն զկրօնս քրիստոնէութեան, եւ միաբանեաց զրաժանեալ տէրութիւնն Հռովմայեցւոց և տիրեաց մեծաւ զօրութեամբ միահեծան (324)։ Սիրէր և մեծարէր զքրիստոնէութիւնն։ Եւ բազմապատիկ օրէնս եւ ապա-